ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԲՄԾՁԲ-20-4/1-3 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 10 .04.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից «ԼԱՎ ԸՆԿԵՐ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Վ. Համբարձումյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Կատարող, մյուս կողմից՝ երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 12.03.2020թ. կնքված № ԲՄԾՁԲ-20-4/1-3 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ծառայությունների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2. Կատարողն պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն Համաձայնագրով նախատեսված բեռնատարների վերանորոգման ծառայությունների (այսուհետև՝ Ծառայություն) համաձայն № 1 Հավելվածով սահմանված ծառայությունների գնման ժամանակացույցի, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունների արդյունքները և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում: Ծառայությունների տեխնիկական բնութագիրը սահմանված է Պայմանագրով:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Համաձայնագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 280000000 (երկու հարյուր ութսուն միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն Կատարած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ Պայմանագրի 4.2 և սույն համաձայնագրի N 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված կարգով:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ծառայության հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ սպառազինության վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ԼԱՎ ԸՆԿԵՐ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք. Կապան, Շահումյան 19/40
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Այդի Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011024537	Հ/Հ 11817000131700
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 09414681
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ	Տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Հավելված N 1
N ԲՄԾՁԲ-20-4/1-3 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

Ծառայությունների գնման ժամանակացույց

Հ/հ	Ծառայության անվանումը	Չ/մ	Կատարողին վճարվող գումարի գործակից	Քանակ	Ընդհանուր գին	Գնման ժամանակացույց
2	Բեռնատարների վերանորոգման ծառայություններ ՈՒՐԱԼ ավտոմեքենայի (իր մոդիֆիկացիաներով)	դրամ	1	1	230000000	2020թ. 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ., ըստ ՀՀ ՀՈՒ սպառազինության վարչության հայտերի
4	Բեռնատարների վերանորոգման ծառայություններ ԿՐԱԶ ավտոմեքենայի (իր մոդիֆիկացիաներով)	դրամ	0.629	1	50000000	

Հավելված N 2
N ԲՄԾՁԲ-20-4/1-3 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

Ծառայությունների վճարման ժամանակացույց

ՀՀ դրամ

Հ/Հ	Ծառայության անվանումը	CPV կոդ	Վճարումը կիրականացվի 2020թ. համապատասխան ամիսներին,ընդ որում՝								
			Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 20.12.2020թ
2	Բեռնատարների վերանորոգման ծառայություններ ՈՒՐԱԼ ավտոմեքենայի (իր մոդիֆիկացիաներով)	50111220/507	76666666	76666666	76666666	153333332	153333332	153333332	230000000	230000000	230000000
4	Բեռնատարների վերանորոգման ծառայություններ ԿՐԱԶ ավտոմեքենայի (իր մոդիֆիկացիաներով)	50111220/511	16666666	16666666	16666666	33333332	33333332	33333332	50000000	50000000	50000000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի տնօրեն
Մ. ՅՈԼՉՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
«ԼԱՎ ԸՆԿԵՐ» ՍՊԸ տնօրեն
Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ